Արձանագրություն N 6

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40 *ծածկագրով գնանշման հարցման մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

ք.Երևան ***« 16 » « 04 » 2026թ. ժ. 16:00***

Նիստին մասնակցում էին՝

- *ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ, փրկարար ծառայության գնդապետ Բ. Վարդազարյան (հանձնաժողովի նախագահ),*
- *ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության փրկարարական ուժերի համակարգման բաժնի պետ, փրկարար ծառայության գնդապետ Մ. Գաբրիելյան (գնահատող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության փրկարարական ուժերի համակարգման բաժնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության մայոր Ս. Սիրադեղյան (գնահատող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հրշեջ-փրկարարական պատրաստության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության փոխգնդապետ Դ. Բարխուդարյան (բացող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հրշեջ-փրկարարական պատրաստության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության փոխգնդապետ Գ. Շահբազյան (բացող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սարգսյան (հանձնաժողովի քարտուղար):*

ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար ***հատուկ նպատակային այլ նյութերի*** *ձեռքբերման նպատակով հայտարարված* ***ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40*** *ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝*

Օրակարգ

1. ***Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.***

Հայտ ներկայացրած մասնակից՝ ***«Ալեռտո» ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացրած հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ:*

13.04.2026 թվականին մասնակցին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունները շտկելու համար: Մասնակից՝ ***«Ալեռտո» ՍՊԸ-ի*** *կողմից անհամապատասխանությունները շտկվել են:*

2. ***Հանձնաժողովը որոշեց՝***

✓ ***ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40*** *ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝* ***2-րդ*** *չափաբաժնով՝* ***«Ավտոջան» ՍՊԸ-ին:***

Մասնակցի կողմից ներկայացված գնառաջարկը չի գերազանցում նախահաշվային գինը և համարվում է նվազագույն:

✓ ***ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40*** *ծածկագրով գնման ընթացակարգը* ***1-ին*** *չափաբաժնով համարվում են չկայացած, քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի* ***3-րդ կետը*** *գնման ընթացակարգը վերոգրյալ չափաբաժնով հայտարարում է չկայացած:*

3. ***Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև ***10-րդ օրացուցային*** *օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

Անգործության ժամկետի ավարտից հետո, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում ***«Ավտոջան» ՍՊԸ-ին*** *կառաջարկվի կնքել* ***հատուկ նպատակային այլ նյութերի*** *ձեռքբերման գնման պայմանագիր:*

Ընդունվեց որոշում՝ *կողմ 5 դեմ 0 :*

Հանձնաժողովի Նախագահ՝
փ/ծ գնդապետ — *Բ. Վարդազարյան*

Հայտը գնահատող անդամներ՝
փ/ծ գնդապետ — *Մ. Գաբրիելյան*
փ/ծ մայոր — *Ս. Սիրադեղյան*

Հայտը բացող անդամներ՝
փ/ծ փոխգնդապետ — *Դ. Բարխուդարյան*
փ/ծ փոխգնդապետ — *Գ. Շահբազյան*

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏՎ ԳՀ գլխավոր մասնագետ — *Ա. Սարգսյան*